ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գեղարքունիքի մարզ
գ. Բերդկունք
էլ. փոստ berdkunq.gegharquniq@mta.gov.am

ՔԱՂՎԱԾՔ ՈՐՈՇՈՒՄԻՑ

«16» մայիսի 2016 թվականի թիվ 11-Ն

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածի,« Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-ին հոդվածի 33-րդ կետի,20-րդ հոդվածի 3.2-րդ կետի,30-րդ հոդվածի 6.1-ին կետի,33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի,«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի,«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական Ինքնակառավարման եվրոպական խարտիան ,« Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքը,«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ.նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշումը համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամների քվեարկությունը՝
Կողմ՝
Վահան Հովհաննիսյան
Շիրակ Վարդանյան
Կարեն Թադևոսյան
Գևորգ Մակարյան

Դեմ՝ 0
Ձեռնպահ՝ 0
Չի մասնակցել՝
Արամ Դադիկյանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ.ԴԱԴԻԿՅԱՆ